ՀՈՎՎԵՐԳԱԿԱՆ

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երաշխավորությունն ընդունելիս ուստիպատուկ կամուրջ է դեպի մարդկային հոգու խորքերը

ՀՈՎՎԵՐԳԱԿԱՆ

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երաժշտությունը յուրահատուկ կամուրջ է դեպի մարդկային հոգու խորքերը, բայց ազգային երաժշտությունը մեր ինքնության խորհրդանիշն ու ապացույցն է...

Սրինգը կամ բլուլը փայտյա փողային, սնամեջ հայկական ազգային նվագարան է: Պատրաստվում է հիմնականում ծիրանի ծառի փայտից, նաև եղեգից, այժմ նաև տարբեր մետաղներից: Մեզ է հասել հնագույն ժամանակներից: Սկզբում այն նվագել են հովիվները: Նվագարանի մասին հիշատակություններ կան մեր որմնանկարներում, ձեռագիր մատյաններում: Այն ժամանակին հրաշալի նվագել է Կոմիտաս Վարդապետը:

Սրինգի ընտանիքին պատկանող երաժշտական գործիքները տարածված են նաև Մերձավոր Արևելքի և ասիական երկրներում: Բուլղարիայում այն անվանում են կավալ, արաբական երկրներում նեյ: Շատ մեծ տարածում ունի քրդերի շրջանում, նրանք նույնպես բլուլ են կոչում:

Հայկական սրինգը կամ բլուլը տարբերվում է մյուս ազգակից նվագարաններից ձայնաշարով, ձեռքերի դրվածքով և պատրաստման նյութով (ծիրանենու փայտից պատրաստվում է միայն հայկական բլուլը): Որոշ աղբյուրների համաձայն գործիքի սրինգ անվանումը ծագում է հունական Սիրինգս աստվածուհու անունից: Քանի որ ֆլեյտայի ընտանիքին պատկանող գործիք է, այն նաև անվանում են հայկական ֆլեյտա (Armenian flute): Հայկական ավանդական, կոմիտասյան բլուլը մեկ ամբողջական

փող է, երկու կողմից բացված անցքերով, ձայնարտաբերումը կառավարում է երաժիշտը: Դիմերեսին ունի 7, իսկ հակառակ կողմում՝ 1 անցք:

Հայկական փայտյա փողային նվագարանների վարպետ Նորայր Քարտաշյանի շնորհիվ գործիքի վրա ավելացվել է 8-րդ անցքը, որը բարելավել է նվագարանի տեխնիկական հնարավորությունները, ձայնաշարը դարձրել լիարժեք խրոմատիկ և կատարելագործել գործիքի կատարողականությունը:

Բլուլը համարվում է մենակատար և նվագակցող գործիք: Նվագակցության ավանդական ընդունված ձևը տրիոն է՝ բլուլ, դամ և որևէ հարվածային գործիք (դափ կամ դհոլ):

Բլուլի նվագացանկը ներառում է ավանդական հովվականչեր, ժողովրդական մեղեդիներ, պարեղանակներ, միջնադարյան տաղեր և շարականներ, աշուղական մեղեդիներ, դասական ստեղծագործություններ: Կան նաև կոմպոզիտորների կողմից սրինգի համար գրված ստեղծագործություններ՝ Խաչատուր Ավետիսյան «Հովվերգական», «Հովվերգական պոեմ»:

Սույն ալբոմը փոքրիկ հաշվետվություն-պատմություն է, ընտրված մեղեդիների փոքրիկ փունջը հոգուս կանչն է՝ նախատեսված բոլոր երաժշտասերների համար:

Աննա Հովհաննիսյան

1. Կոմիտաս «Մարալի»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

Շուշվա կանացի մենապար է, որը Կոմիտասը գրառել է Վաղարշապատում, առաջին մշակումն արել է դաշնամուրի համար: Ու քանի որ բնագրում նշված է՝ դափի ոճով կատարում, նվագակցության մեջ օգտագործվել է դափ, ինչպես նաև քանոն:

2. Խաչատուր Տարոնացի «Խորհուրդ խորին»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

Խորհուրդ խորին կամ Զգեստավորման շարական: Այն համարվում է պատարագի նախերգանքը: Ստեղծվել է 13–րդ դարում, հեղինակ՝ միջնադարյան երաժիշտ, գիտնական և բանաստեղծ Խաչատուր Տարոնացի: 12-13-րդ դդ. եղել է Հաղարծնի վանահայր, նպաստել է խազագրության զարգացմանը: Շարականն ունի հազվագյուտ կառուցվածք և արտացոլում է իր դարաշրջանի երաժշտական և բանաստեղծական միտքը:

3. Բարսեղ Կանաչյան «Օրորոցային»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

Գործիքավորման ժամանակ հիմնվել ենք բնօրինակի հարմոնիզացիայի վրա՝ համադրելով ժողովրդական նվագարանների՝ սրինգի, ուդի, բամբիռի և դափի հնչողությունը, ժողովրդական գործիքային երաժշտության կատարողական ավանդույթները:

4. Ալեքսանդր Ալեքսանդրյան (Մելիք-Շահնազարյան) «Նազ պար», մշակումը, գործիքավորումը՝ Աննա Հովհաննիսյանի

Ծնունդով՝ շուշեցի, մասնագիտությամբ՝ թառահար, կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ժողովրդական գործիքների անսամբլների ղեկավար Ալեքսանդր Ալեքսանդրյանը մի շարք կանացի մենապարերի մեղեդիների հեղինակ է: «Նազ պարը» կանացի մենապար է՝ նվիրված Նազելի անունով մի աղջկա, որին համակրում էր մաեստրոն: Այս մեղեդին, հայկական բազմաթիվ այլ մեղեդիների հետ միասին, հայտնվել է մեր հարևանների կողմից գողացված և սեփականացված նմուշների ցանկում:

Գործիքավորման մեջ օգտագործվել են շվի, կիթառ, բաս կիթառ, դափ և կախոն՝ նպատակ ունենալով ցույց տալ բլուլի տեմբրային լուծումը այդ գործիքների հետ:

5. Կոմիտաս «Ախ, Մարալ ջան»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի
Երկխոսություն բլուլի և դաշնամուրի միջև

6. Գրիգոր Նարեկացի «Ահեղ ձայնս»
Միջնադարյան տաղերգուի այս գոհարը նվիրված է խաչի վերացմանը:

7. Ի. Ս. Բախ «Մենուետ և Սկերցո H-moll»
փոխադրումը՝ Աննա Հովհաննիսյանի

Լարային կվարտետի փոխադրում՝ սրինգի կվարտետի համար: Բարոկոյի շրջանի երաժշտական գույների փոխանցումը հայկական սրինգի հնչյունների միջոցով:

8. Կոմիտաս «Գարուն ա»
գործիքավորումը՝ Մարիա Շահինյանի
Թառի և բլուլի մտերմիկ երկխոսություն է, որն ուղեկցվում է թավջութակի, քանոնի և դափի նուրբ նվագակցությամբ:

9. Բուլղարական սյուիտ
մշակումը՝ Կարո Ցայլայանի
գործիքավորումը՝ Աննա Հովհաննիսյանի

Բուլղարական և հայկական ժողովրդական մեղեդիներին միավորում է ռիթմերի, երաժշտական տեմպերի բազմազանությունը և էներգետիկ ազդեցությունը:
Բլուլի և քսիլոֆոնի երկխոսություն, որն ուղեկցվում է դաշնամուրի և կախոնի ակտիվ նվագակցությամբ:

10. Պաղդասար Դպիր «Ի ննջմանէդ արքայական»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

Միջնադարյան գուսանական, նոր աշուղական և հոգևոր երաժշտության համաձուլման օրինակներից է՝ ստեղծված 1707 թ.-ին: Առաջին հայացքից սիրային երգ է, բայց փոխաբերական իմաստով՝ պայքարի կոչ:

11. Կոմիտասյան շարք «Կաքավիկ, էս առուն, Հոյ Նազան»
փոխադրումը՝ Աննա Հովհաննիսյանի
Բլուլի և տավիղի մտերմիկ զրույցներ

12. Խաչատուր Ավետիսյան «Հովվերգական»
գործիքավորումը՝ Մարիա Շահինյանի

Թավ շվիի, բլուլի համար գրված ստեղծագործություն՝ ժողովրդական գործիքների նվագախմբի ուղեկցությամբ: Նվիրված է մեծագույն վարպետ Արարատ Պետրոսյանին: Ներկայացվում է փոքրիկ, մինիմալիստական կազմով՝ սանթուր, քանոն, թավջութակ և դափ՝ ունկնդրին փոխանցելու երաժշտական գունապնակի փոքրիկ փունջ:

13. Ալեքսանդր Ալեքսանդրյան «Բախտավարի»
մշակումը, գործիքավորումը՝ Աննա Հովհաննիսյանի

Արցախի հարսանեկան մենապար: Շատ հաճախ այն ներկայացվել է մերթ որպես Արցախի, մերթ որպես Սյունիքի ժողովրդական մեղեդի:

ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՔՈ ԿԱՊԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏ

«Նարեկացի» արվեստի միությունը (ՆԱՄ) բարեգործական հիմունքներով գործող և շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է: Կրելով սուրբ Գրիգոր Նարեկացու անունը և առաջնորդվելով հոգևորի խորհրդով՝ միությունը կոչված է ծառայելու հայ արվեստին, մշակույթին և հոգևոր արժեքներին: Այս ոգով է հիմնադրվել «Նարեկացի» արվեստի միությունը 2000 թվականին ԱՄՆ-ում Նարեկ Հարությունյանի կողմից, իր ավագ եղբոր՝ Սարո Հարությունյանի, Հարկո Ինսենթիվզ ընկերության և իրենց լուսահոգի հոր՝ Կարապետ Հարությունյանի հիմնական աջակցությամբ:

2004 թվականին միությունն իր դռներն է բացել Երևանում:

ՆԱՄ-ում բոլոր միջոցառումները կազմակերպվում են միության կողմից բացառապես անվճար հիմունքներով:

Իր գործունեության ընթացքում ՆԱՄ-ը կազմակերպել և կյանքի է կոչել մի քանի տասնյակ հատուկ նախագծեր, ամեն տարի իրականացնում է 300-ից ավելի համերգներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, վարպետության դասեր, ֆիլմերի ցուցադրություններ և այլն, լույս է ընծայել բազմաթիվ արժեքավոր հրատարակություններ, համագործակցում է հայ և օտարերկրացի շատ ստեղծագործողների, ինչպես նաև դեսպանատների հետ:

ՆԱՄ-ի հատուկ ուշադրության կենտրոնում են հաշմանդամություն ունեցող մարդիկ, տաղանդավոր երեխաները, մարզերի երիտասարդ արվեստագետները:

«Նարեկացի» արվեստի միության Երևանի կենտրոնում գործում են «Նարեկացի» ժողովրդական նվագարանների նվագախումբը, «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը, «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբը և միության նկարչության դասարանը:

2006 թվականին «Նարեկացի» արվեստի միությունը հիմնում է իր մասնաճյուղը Շուշիում: Ցավոք, 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Շուշին դուրս է գալիս մեր վերահսկողությունից:

Շուշիի կրթօջախ-կենտրոնում անվճար իրականացվում էին տարբեր ուսուցողական ծրագրեր՝ կիթառի (հեղինակային երգ), գեղանկարչության, փայտափորագրության, մանրանկարչության, ասեղնագործության, լուսանկարչության, կարպետագործության, կավագործության, թատերական, պարի, ասմունքի, երգի, անգլերենի, արտթերապիայի մշտական դասընթացներ, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումներ:

Միության բոլոր միջոցառումների մուտքը միշտ ազատ է:

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ծնվել է 1989 թ.-ին Երևանում:

Սրինգ նվագել սովորել է Հ. Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի ազգային նվագարանների 7-ամյա դպրոցում, վաստակավոր մանկավարժներ Աշոտ Մինասյանի և արվեստի վաստակավոր գործիչ, սրնգահար, դուդուկահար, երգահան Նորայր Ժամհարյանի դասարաններում:

Երաժշտական կրթությունը շարունակել է Երևանի Ա.Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական ուսումնարանում՝ Գառնիկ Բաղդասարյանի դասարանում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Լիլիթ Սիմոնյանի դասարանում:

2004-2006թթ. Երևանի քաղաքապետարանի Յուրի Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիայի ազգային նվագարանների համույթի կազմում համերգներ է ունեցել Հայաստանի մարզերում, Վրաստանում:

2007-2011 թթ. հանդես է եկել Մգրո Սարգսյանի անվան «Մարաթուկ» ազգագրական համույթում:

Ռուդիկ Հարոյանի անվան «Մասունք» (սկսած 2011 թ.) և «Նուբար» ավանդական երգ ու պարի (սկսած 2009 թ.) խմբերի

բլուլահարն է: «Մասունքի» և «Նուբարի» կազմում ունեցել է ելույթներ Երևանում, Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում, Վրաստանում, Արևմտյան Հայաստանի տարածքում, Հնդկաստանում և այլուր, կատարել ձայնագրություններ:

2013-2016թթ. ընկերներով կազմակերպել են «Քարահունջ բենդը», որը ներկայացնում էր հայկական ֆոլկ մեղեդիներ:

2019 թ.-ից սկսած համագործակցելով դաշնակահար և կոմպոզիտոր Լուսի Խանյանի հետ ներկայացնում են հեղինակային և ժողովրդական ստեղծագործություններ: Համատեղ ձայնագրել են 2 ալբոմ «Կոմիտասյան» և «Աբսենցիա»:

2017-2019 թթ. աշխատել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում՝ որպես շվիի ուսուցիչ, նախաձեռնել և ստեղծել է նախակրթարանի դաստիարակներից կազմված շվիահարների համույթ, որը ելույթներով հանդես է եկել Երևանում, ՀՀ մարզերում, Վրաստանում:

2012թ.-ից մինչ օրս դասավանդում է Երևանի Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոցում՝ շվի, սրինգ, իսկ 2021թ. նույն դպրոցում ստեղծել և ղեկավարում է «Դանիելյան ֆոլկ բենդ» նախագիծը, որը կազմված է դպրոցի ուսուցիչներից և սաներից:

Բենդը ունեցել է համերգներ, ռադիոեթերներ Երևանում, Հայաստանի մարզերում, մասնակցել է միջազգային փառատոների, մրցույթների:

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ԻՐ ՍՐԻՆԳՆԵՐԸ

1932թ. Փ. Թերլեմեզյանը իր հեղինակած Կոմիտասի դիմանկարի լուսանկարը նվիրում է Ալազանին՝ հետևյալ մակագրությամբ. «Թանկագին ընկերոջս՝ Ալազանին»

Komitas and his Srings

In 1932 P. Terlemezyan dedicated the photo of Komitas' portrait painted by him to Alazan with the following inscription: "To my dear friend Alazan"

ՀՈՎՎՐԳԱԿԱՆ

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

PASTORAL

ANNA HOVHANNISYAN

PASTORAL
ANNA HOVHANNISYAN

Music is a unique bridge to the depths of the human soul,
but national music is a symbol and proof of our identity...

The Sring (Reed, Flute), or Blul, is a woodwind, end-blown Armenian national instrument. It is usually made of apricot wood but can also be made from bamboo and various metals. The Sring is an ancient instrument that was first played by shepherds and whose references can be found in our murals and manuscripts. Armenian composer Komitas Vardapet played the instrument, also called the Armenian flute, perfectly in his time.

Musical instruments belonging to the Sring family are also popular in the Middle East and Asian countries. In Bulgaria, it is called "kaval," whereas in Arab countries, it is called "Ney." It is also very popular among the Kurds, who refer to the instrument as "Bulul."

The Armenian Sring, or Blul, differs from other related instruments in terms of its tone, hand position, and material (only the Armenian Blul is made from apricot wood). According to some sources, the name of the instrument, Sring, originates from the name of the Greek goddess, Syrings.

The traditional Armenian Komitas Blul is one solid pipe, with 7 holes on the front side and 1 hole on the reverse side. The sound is controlled by a musician.

Thanks to Norayr Kartashyan, the master of Armenian woodwind instruments, the 8th hole was added to the instrument, which improved its technical capabilities, made the sound system fully chromatic, and improved overall performance of the instrument.

The Blul is considered both a solo and accompanying instrument. The traditionally accepted form of playing is a trio: Blul, Dam and any percussion instrument (Dap or Dhol).

The Blul's repertoire includes traditional pastoral chants, folk melodies, dances, medieval verses and psalms, rustic melodies, and classical works. There are also works written by composers for Sring: Khachatur Avetisyan "Hovvergakan" (Pastoral), "Hovvergakan Poem."

The present album is a little report-story, the small collection of selected melodies is the call of my soul, intended for all music lovers.

Anna Hovhannisyan

1. Komitas - Marali
Arrangement by Anna Hovhannisyan

It is a female solo dance of Shoushi, which Komitas recorded in Vagharshapat. He made the first arrangement for the piano. Since it is mentioned in the original that it is performed in the style of dap (tambourine), dap was used in the accompaniment, as well as a qanun.

2. Khachatur Taronatsi – Khorhurd Khorin (Mystery Deep)
Arrangement by Anna Hovhannisyan

Khorhurd Khorin (Mystery Deep) or Dressing Sharakan (Chant). It is considered the prelude to the liturgy. It was created in the 13th century by the medieval musician, scientist and poet Khachatur Taronatsi. In the 12-13th centuries, he was put in charge of the Haghartsin Monastery and contributed to the development of khaz notation. The chant has a rare structure and reflects the musical and poetic thought of its era.

3. Barsegh Kanachyan - Lullaby
Arrangement by Anna Hovhannisyan

During the arrangement, we relied on the harmonization of the original, combining the sounds of various folk instruments; sring, oud, bambir, and dap; and the performance traditions of folk instrumental music.

4. Alexander Alexandryan (Melik-Shahnazaryan) –
Naz Par (Gentle Dance)
Arrangement by Anna Hovhannisyan

Alexander Alexandryan, (born in Shoushi), harpist, composer, People's Artist of the ASSR, head of folk instruments ensembles, is the author of a number of melodies for female solo dances. "Naz Par" is a female solo dance dedicated to a girl named Nazeli, whom the maestro was in love with. This melody, along with many other Armenian melodies, appeared on the list of samples stolen and owned by our neighbors. Shvi, guitar, bass guitar, dap and kakhon are used for the instrumentation to show Blul's timbral solution with those instruments.

5. Komitas – Akh Maral jan (Ah, Dear Maral)
Arrangement by Anna Hovhannisyan

A dialogue between the flute and the piano

6. Grigor Narekatsi – Ahegh Dzayns (Powerful Voice)
This gem of the medieval poet is dedicated to the removal of the cross.

7. J. S. Bach - Minuet and Scherzo in H minor
Transcription by Anna Hovhannisyan

Transcription of String Quartet for Sring Quartet.
Transferring the musical colors of the Baroque period through the sounds of the Armenian flute.

8. Komitas – Garun a (It's Spring)
Arrangement by Maria Shahinyan

Dialogue between tar and blul, which is accompanied by the mild accompaniment of cello, qanun and dap.

9. Bulgarian Suite
Arrangement by Karo Yailayan
Instrumentation by Anna Hovhannisyan

Bulgarian and Armenian folk melodies are united by the diversity of rhythms, musical tempos, and energetic influence.
Dialogue between blul and xylophone, which is accompanied by an active accompaniment of piano and accordion.

10. Paghdasar Dpir - I Nndjmaned Arqayakan (From Your Royal Sleep)
Arrangement by Anna Hovhannisyan

It is one of the examples of fusion of medieval gusan, new ashugh and spiritual music, created in 1707.
At first sight, it is a love song, but metaphorically, it is a call to fight.

11. Komitas series - Kakavik, Es Arun, Hoy Nazan
Transcription by Anna Hovhannisyan
Intimate talks of blul and harp

12. Khachatur Avetisyan - Hovvergakan (Pastoral)
Arrangement by Maria Shahinyan

A composition written for tav shvi, blul, accompanied by the Orchestra of folk instruments. It is dedicated to the great master Ararat Petrosyan. Presented in a small, minimalistic format: santur, qanun, cello and dap: a small bundle of musical palette to convey to the listener.

13. Alexander Alexandryan - Bakhtavari
Arrangement by Anna Hovhannisyan
Artsakh wedding solo dance. It has been presented sometimes as Artsakh, sometimes as Syunik folk melody.

NAREGATSI ART INSTITUTE

Your Cultural Connection to Armenia

The Naregatsi Art Institute (NAI) is a non-profit organization that was established and currently operates on purely charitable bases. Named after Saint Gregory of Narek, the NAI's principle mission is to preserve and promote Armenian art, culture and spiritual values. Naregatsi Art Institute was founded in the USA in the year 2000 by Nareg Hartounian and by the generous contributions of Saro Hartounian, their late father Garabed Haroutunian and Harco Incentives Inc.

The Institute opened its doors in Yerevan in 2004.

All activities at the NAI are free of charge for both the audience and featured talent.

Since its inception, the NAI each year has presented more than 300 concerts, exhibitions, lectures, master classes and film screenings collaborating with a great number of artists from Armenia and abroad and with some embassies as well. As part of its contribution to Armenian culture, NAI has created numerous unique books, CD's and publications exploring various facets of the rich Armenian cultural heritage.

The NAI provides a special place for children, emerging artists, artists with disabilities and artists living in the regions of Armenia outside of Yerevan. It also provides space and resources to anyone with something of artistic value to share.

The NAI is home to The Naregatsi Orchestra, The Nova Folk Instruments Ensemble, The Knar Spiritual and Folk Song Group and The Painting Class.

In 2006, the Naregatsi Art Institute founded its branch in Shoushi. Unfortunately, after the 44-day war of 2020, we lost Shoushi.

The Art Center in Shoushi provided a variety of free classes in music (including piano, bard songs class, choir), as well as instructions in painting, wood engraving, miniature painting, embroidery, photography, carpet making, pottery, theater, puppet theater, dance, recitation, English language, art therapy, computer graphics and design. Naregatsi Shoushi also provided its own unique series of presentations and cultural events.

Admission to all events is free.

ANNA HOVHANNISYAN was born in 1989 in Yerevan.

She studied playing sring at the School of National Instruments of the Henrik Igityan National Centre for Aesthetics in the classes of distinguished pedagogues Ashot Minasyan and Honored Artist, sring and duduk player, songwriter Norayr Zhamharyan.
She continued her musical education at the Yerevan State Musical-Pedagogical College named after A. Babajanyan, in the class of Garnik Baghdasaryan, and at the State Conservatory named after Komitas, in the class of Lilit Simonyan.
In 2004-2006 she gave concerts in the regions of Armenia, Georgia as a member of the Ensemble of National Instruments of the Children's Philharmonic named after Yuri Bakhshyan of Yerevan Municipality.
In 2007-2011 she performed in the Maratuk Ethnographic Ensemble named after Mgro Sargsyan.
She is the blul player of Rudik Haroyan's Masunk Ensemble (since 2011) and Nubar Folk Ensemble (since 2009).
As part of Masunk and Nubar, she has performed in Yerevan, all regions of Armenia and Artsakh, Georgia, Western Armenia, India and elsewhere,

and has made recordings.
In 2013-2016 she organized with friends the Karahunj Band, which performed Armenian folk melodies.
Since 2019, in collaboration with pianist and composer Lusi Khanyan, they have been presenting original and folk works. Together they recorded 2 albums "Komitasyan" and "Absentsia".
In 2017-2019 she worked at the Mkhitar Sebastatsi Educational Complex as a teacher of shvi, initiated and created an ensemble of shvi players including the teachers of the preschool, which performed in Yerevan, the RA regions, Georgia.
Since 2012, she has been teaching shvi, flute, at the Danielyan Art School and in 2021 in the same school she created and manages the Danielian Folk Band Project, which is composed of teachers and students of the school.
The band had concerts, radio broadcasts in Yerevan, in the regions of Armenia, participated in international festivals and competitions.

ՀՈՎՎԵՐԳԱԿԱՆ
ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1. Կոմիտաս «Մարալի»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

2. Խաչատուր Տարոնացի «Խորհուրդ խորին»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

3. Բարսեղ Կանաչյան «Օրորոցային»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

4. Ալեքսանդր Ալեքսանդրյան
(Մելիք-Շահնազարյան) «Նազ պար»
մշակումը, գործիքավորումը՝ Աննա Հովհաննիսյանի

5. Կոմիտաս «Ախ, Մարալ ջան»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

6. Գրիգոր Նարեկացի «Ահեղ ձայնս»

7. Ի. Ս. Բախ «Մենուետ և Սկերցո H-moll»
փոխադրումը՝ Աննա Հովհաննիսյանի

8. Կոմիտաս «Գարուն ա»
գործիքավորումը՝ Մարիա Շահինյանի

9. Բուլղարական սյուիտ
մշակումը՝ Կարո Յայլայանի
գործիքավորումը՝ Աննա Հովհաննիսյանի

10. Պաղդասար Դպիր «Ի ննջմանէդ արքայական»
մշակումը՝ Աննա Հովհաննիսյանի

11. Կոմիտասյան շարք «Կաքավիկ, Էս առուն, Հոյ
Նազան» փոխադրումը՝ Աննա Հովհաննիսյանի

12. Խաչատուր Ավետիսյան «Հովվերգական»
գործիքավորումը՝ Մարիա Շահինյանի

13. Ալեքսանդր Ալեքսանդրյան «Բախտավարի»
մշակումը, գործիքավորումը՝ Աննա Հովհաննիսյանի

PASTORAL
ANNA HOVHANNISYAN

1. Komitas - Marali
Arrangement by Anna Hovhannisyan

2. Khachatur Taronatsi – Khorhurd Khorin (Mystery Deep)
Arrangement by Anna Hovhannisyan

3. Barsegh Kanachyan - Lullaby
Arrangement by Anna Hovhannisyan

4. Alexander Alexandryan (Melik-Shahnazaryan) –
Naz Par (Gentle Dance)
Arrangement by Anna Hovhannisyan

5. Komitas – Akh Maral jan (Ah, Dear Maral)
Arrangement by Anna Hovhannisyan

6. Grigor Narekatsi – Ahegh Dzayns (Powerful Voice)

7. J. S. Bach - Minuet and Scherzo in H minor
Transcription by Anna Hovhannisyan

8. Komitas – Garun a (It's Spring)
Arrangement by Maria Shahinyan

9. Bulgarian Suite
Arrangement by Karo Yailayan
Instrumentation by Anna Hovhannisyan

10. Paghdasar Dpir - I Nndjmaned Arqayakan
(From Your Royal Sleep)
Arrangement by Anna Hovhannisyan

11. Komitas series - Kakavik, Es Arun, Hoy Nazan
Transcription by Anna Hovhannisyan

12. Khachatur Avetisyan - Hovvergakan (Pastoral)
Arrangement by Maria Shahinyan

13. Alexander Alexandryan - Bakhtavari
Arrangement by Anna Hovhannisyan

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Մարիա Շահինյան (թառ, քանոն, դաշնամուր)
Սոնա Ենգիբարյան (տավիղ)
Անժելա Միքայելյան (սանթուր)
Մարզպետ Փոթոյան (ուդ)
Մերի Գալստյան (քամանչա)
Մարիամ Մնացականյան (սազ)
Արփինե Սարգսյան (թավջութակ)
Լիլիթ Խաչունց (թավջութակ)
Աննա-Սառա Պողոսյան (դափ)
Միքայել Գուլիքեխվան (դափ, կախոն, քսիլոֆոն)
Սահակ Յանթուրյան (դափ)
Ստյոպ Սարգսյան (կախոն)
Մարինե Մաղաքյան (կիթառ)
Դավիթ Եսայան (բաս կիթառ)

MUSICIANS

Maria Shahinyan (tar, qanun, piano)
Sona Yengibaryan (harp)
Angela Mikayelyan (santur)
Marzpet Potoyan (oud)
Mary Galstyan (kamancha)
Mariam Mnatsakanyan (saz)
Arpine Sargsyan (cello)
Lilit Khachunts (cello)
Anna-Sara Poghosyan (dap)
Mikayel Gulikekhvaev (dap, kakhon, xylophone)
Sahak Yanturyan (dap)
Styop Sargsyan (kakhon)
Marine Maghakyan (guitar)
Davit Yesayan (bass guitar)

ՀՈՎՎԵՐԳԱԿԱՆ

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գրաֆիկ դիզայներ՝ Լիլիթ Խաչատրյան

Ձայնագրող և համադրող՝ Սերգեյ Գասպարյան
Alpha-sound record studio

Սրբագրիչ՝ Մարինե Հարությունյան

Անգլերեն տեքստի խմբագիր՝ Նանոր Հարթունյան

Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Յարութիւնեան

Հատուկ շնորհակալություն Ե. Չարենցի անվան
գրականության և արվեստի թանգարանին

© ℗ Նարեկացի Արվեստի Միություն, 2023
© Աննա Հովհաննիսյան, 2023

ISBN 978-9939-9283-9-5

PASTORAL

ANNA HOVHANNISYAN

Graphic Designer: Lilit Khachatryan

Recording, mixing and mastering by
Sergey Gasparyan - Alpha-sound record studio

Proofreading by Marine Harutyunyan

English text edited by Nanor Hartounian

Executive Producer: Nareg Hartounian

Special thanks to the Museum of Literature and Art
after Y. Charents

© ℗ Naregatsi Art Institute, 2023
© Anna Hovhannisyan, 2023

ISBN 978-9939-9283-9-5

Սկանավորեք QR կոդը՝ երգերը լսելու համար

Scan the QR code to listen to the songs

ՈՎՎԵՐԳԱԿԱՆ

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՍԻՈՒԹՅՈՒՆ